օրավարձ	անսահմանափակ ինտերնետ
200 Դ	ներբեռնում մինչև 512 Կբ/վ վերբեռնում մինչև 256 Կբ/վ

Օրավարձը Ձեր հաշվից կգանձվի տվյալ օրն առաջին անգամ ինտերնետ մուտք գործելու պահին՝ անկախ օգտագործման ծավալից: Դուք կկարողանաք օգտվել ինտերնետից մինչև տվյալ օրվա 23:59:59:
Եթե ցանկանում եք օգտվել ինտերնետից ավելի բարձր արագությամբ, պարզապես ակտիվացրեք գերարագ ինտերնետի փաթեթներ՝ Ձեր մոդեմի ինտերֆեյսից ուղարկելով SMS 111 համարին համապատասխանաբար 1GB կամ 2GB կամ 4GB բովանդակությամբ:

գերարագ ինտերնետի փաթեթներ	2 000 Դ 1 ԳԲ բանալի բառ 1ԳԲ	2 500 Դ 2 ԳԲ բանալի բառ 2ԳԲ	6 000 Դ 4 ԳԲ բանալի բառ 4ԳԲ
անսահմանափակ ինտերնետ	↓ մինչև 512 Կբ/վ ↑ մինչև 256 Կբ/վ		
վավերականության ժամկետ	10 օր	10 օր	30 օր

Դուք կարող եք նաև կարճ հաղորդագրություն ուղարկել տեղական բոլոր համարներին՝ 15 դրամ/SMS, իսկ միջազգային համարներին՝ 20 դրամ/SMS սակագնով: Անհրաժեշտ է պարզապես հաշվին ունենալ բավարար գումար:
Ինտերնետ Օրական SIM քարտը կարող եք ձեռք բերել Ucom-ի ցանկացած սպասարկման սրահում: Պարզապես ընտրեք գերարագ ինտերնետի 3 փաթեթներից այն մեկը, որն առավել համապատասխան է օգտագործման Ձեր պահանջներին: Որքան մեծ լինի Ձեր ընտրած փաթեթը, այնքան մեծ կլինի գերարագ ինտերնետի ծավալը, և երկար՝ փաթեթի վավերականության ժամկետը: Գերարագ ինտերնետի ծավալի սպառվելուց հետո մինչև փաթեթի վավերականության ժամկետի ավարտը կարող եք շարունակել օգտվել ինտերնետից 512 Կբ/վ արագությամբ: Փաթեթի վավերականության ժամկետի ավարտից հետո գերարագ ինտերնետի չօգտագործված ծավալը կզրոյացվի:
Գերարագ ինտերնետի փաթեթի վավերականության ժամկետի ընթացքում նոր փաթեթ ձեռք բերելու դեպքում փաթեթների վավերականության ժամկետները չեն գումարվում, այլ հաշվարկվում են առանձին՝ սկսած յուրաքանչյուրի ձեռքբերման պահից:

Ինտերնետ Օրական առաջարկի բաժանորդները չեն կարող օգտվել Եվս Մեկ Անգամ, Արագ վերբեռնում, Գիշերային ինտերնետ, Kaspersky Anti-Virus և Kaspersky Internet Security ծառայություններից:
Ինտերնետ Օրականը նաև շատ հարմար առաջարկ է զբոսաշրջիկների համար, ովքեր կարող են օգտագործել ինտերնետ այնքան, որքան կցանկանան:
Մարտի 11-ից շարժական ինտերնետի համարից դեպի արտերկիր SMS ուղարկելու հնարավորությունը կարգելափակվի: Ծարունակեք ուղարկել SMS դեպի տեղական ցանցեր:
Լրացուցիչ ծառայությունները/փաթեթները ակտիվանում են ակտիվացումը հաստատող SMS հաղորդագրությունը/ծանուցումը ստանալուց հետո: